ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 24-Լ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՊԱՏՇԱՃ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՃՇԳՐՏԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ին կայանալիք Երևան քաղաքի ավագանու հերթական ընտրություններին քվեարկությանը մասնակցող անձանց

ցուցակները պատշաճ կերպով վարելու, առկա հնարավոր թերությունները հայտնաբերելու և շտկելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալին՝

1) սեղմ ժամկետում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրերի և վիզաների վարչության Երևան քաղաքի անձնագրային ծառայություններից ստանալ իրենց կողմից սպասարկվող ընտրատարածքում ընդգրկված և ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները,

2) ենթակա ստորաբաժանումների ծառայողներին հանձնարարել՝ մինչև սույն թվականի օգոստոսի 21-ը կատարել այցելություններ սպասարկվող տարածքի հասցեներ՝ ցուցակներում առկա հնարավոր անճշտությունները հայտնաբերելու նպատակով,

3) ցուցակներում առկա անձի մահվան վերաբերյալ տեղեկություններ ի հայտ գալու դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ մահվան փաստը հավաստող փաստաթղթեր ձեռք բերելու նպատակով (մահվան վկայական, մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռ, մահվան ակտի գրառում և այլն),

4) մահվան փաստը հավաստող փաստաթղթերի բացակայության դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ մահվան վերաբերյալ լրացուցիչ այլ փաստական տվյալներ ձեռք բերելու համար (մահացած անձի հարազատի, անհնարինության դեպքում հարևանությամբ բնակվող առնվազն երկու անձի գրավոր բացատրություն, տեղեկանք՝ տրված վարչական շրջանի ղեկավարի կողմից, համատիրությունից և այլն),

5) տվյալ հասցեում բնակվող անձի անձնագրում և ցուցակում հաշվառման վերաբերյալ անհամապատասխանություններ ի հայտ գալու դեպքում կազմել

արձանագրություններ՝ դրանց կցելով անձնագրի պատճենը (պատճենը վերցնելու անհնարինության դեպքում տեղում կատարել անձնագրի լուսանկարահանում),

6) ցուցակներում առկա անճշտություններ հայտնաբերելիս ամենօրյա ռեժիմով դրանք տրամադրել տարածքային անձնագրային ծառայությունների ղեկավարներին (կազմված արձանագրություններով, զեկուցագրերով, ձեռք բերված բոլոր փաստաթղթերով),

7) մինչև սույն թվականի օգոստոսի 21-ը ամփոփել կատարված աշխատանքները՝ տվյալ օրվա ավարտին հետ վերադարձնելով նաև անձնագրային ծառայություններից ստացած ցուցակները:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետին՝

1) սեղմ ժամկետում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժիններին (բաժանմունքներին) տրամադրել տվյալ անձնագրային ծառայության կողմից սպասարկվող ընտրատարածքում ընդգրկված ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները,

2) մահվան վկայականների կամ պետական իրավասու մարմնի կողմից տրված մահվան փաստը հավաստող այլ փաստաթղթի առկայության դեպքում մահացած անձին հանել հաշվառումից,

3) անձնագրում և ցուցակներում հաշվառման վերաբերյալ տվյալների անհամապատասխանության առկայության դեպքում քննարկել հասցեի ճշգրտման խնդիրը՝ բավարար հիմքերի առկայության դեպքում կատարելով համապատասխան ուղղումներ,

4) այն դեպքերում, երբ մահվան վերաբերյալ տեղեկությունները հիմնավորված չեն լինի մահվան վկայականով կամ պետական իրավասու մարմնի կողմից տրված այլ փաստաթղթերով, ապահովել տարածքային ստորաբաժանումների միջոցով ստացված

տեղեկատվությունը 1-օրյա ժամկետում զեկուցագրով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչություն ներկայացումը:

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ
03.08.2023թ.

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ